

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՄԱՆՈՒԿ ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏԻՑ

Լիլիթ Ժիրայրի Բարիկյան

Ժան Ժընեն 20-րդ դարի 2-րդ կեսի ֆրանսիական դրամատուրգիայի  
համատեքստում

Ժ.01.07-«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ  
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի  
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2016

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում

Գիտական դեկանար՝

բանասիրական գիտությունների  
թեկնածու, դոցենտ  
ԱՆՈՒՇ ՌՈՍՏՈՍԻ ՄԵԴՐԱԿՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր  
ԿԱՐԼԵՆ ՌԱՖԱՅԵԼԻ ՄԱՏԻՆՅԱՆ

բանասիրական գիտությունների  
թեկնածու, պրոֆեսոր  
ՆԱՏԱԼՅԱ ՄԻՔԱՅԵԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Հայոց ուսական /սլավոնական/  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2017թ. փետրվարի 3-ին՝ ժամը 12:30-ին  
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում գործող  
Գրականագիտության 003 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան,  
Գրիգոր Լուսավորչի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Ա. Աբեղյանի անվան  
գրականության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2016 թ. դեկտեմբերի 27-ին

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝  
բանասիրական

գիտությունների թեկնածու՝

Ս. Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Աշխատանքը նվիրված է 20-րդ դարի ֆրանսիացի գրող, բանաստեղծ, էսսեիստ, դրամատուրգ, հասարակական գործիչ ժան Ժընեի դրամատուրգիայի ուսումնախոսությանը: Ատենախոսության մեջ ներկայացվում են 20-րդ դարի ֆրանսիական դրամատուրգիայի պատմամշակութային համատեքստը և այդ համատեքստում ձևավորված թատերական ուղղությունների զարգացման փուլերը:

Աշխատանքում ուսումնասիրվել և կիրառվել են ժան Ժընեի ստեղծագործություններին առնչվող գիտական աշխատություններ և գրաքննադատական հոդվածներ, ամփոփվել և հանգամանալից ներկայացվել են պիեսներում քննարկվող սոցիալական, քաղաքական, հոգեբանական ենթատեքստերը, դիտարկվել են դրանցում առկա գաղափարական, բարոյահոգեբանական հարցադրումները և փիլիսոփայական տեսակետները, ինչպես նաև ցույց են տրվել դրամաների ձևային, ոճային և բեմադրման առանձնահատկություններն ու օրինաչափությունները: Նման մոտեցումը թույլ է տալիս բացահայտել ժան Ժընեի ստեղծագործական ուղղությունները և մեթոդի զարգացման փուլերը, նաև ներկայացնել դրամատուրգի ուշագրավ մտքերն ու տեսակետները իր գեղագիտական թատրոնի մասին:

Ատենախոսության մեջ փորձ է արվել ավելի խորացնել և զարգացնել որոշ դրույթներ, որոնք նշված են ժան Ժընեին նվիրված քննադատների աշխատություններում: Համեմատվել են ժընեի և նոյն ժամանակաշրջանի հեղինակների գեղագիտական հայացքներն ու գաղափարական սկզբունքները, պիեսների կերպարային համակարգի ու գրեյանձի հիմնական նմանություններն ու տարրերությունները՝ ընդգծելով գրողի դրամաներին բնորոշ տարրերը՝ ոճի և շարադրանքի ինքնատիպություն, կերպարների հոգեբանական խորը վերլուծություն: Ի տարրերություն «արտօլոդի թատրոն» դրամատուրգների՝ ժընեի կերպարները հոգական են, ենթարկվում են մոլորության հասնող կրքերի և բնագրների, որոնց բախտմաներից էլ ստեղծվում են այսուժների կոնֆլիկտները: Ժընեի թատրոնը պահանջում է թանկ և բարդ բեմականացում, վառ գոյներով թատերական զգեստներ, արտասովոր դեկորներ և դիմակահանդեսային գրիմ: Իրերն նորարություն, ընդգծվում է հատկապես ծիսական խաղի, ինքնության որոնման, իրականի և անիրականի համադրումը, ինչն անբաժանելի ամբողջություն է կազմում դրամատուրգի պիեսներում:

Աշխատանքում ըստ անհրաժեշտության դիտարկվել է ժան Ժընեի կյանքն ու ստեղծագործական ուղին և ցույց է տրվել, որ գրողի դժվարին կյանքի իրադարձությունները ձևավորել են նրա աշխարհայացքն ու արտացոլվել են նրա ստեղծագործությունների մեջ:

## ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ժան ժընեի ստեղծագործությունների (վեպեր, արձակ բանաստեղծություններ, պիեսներ, էսսեներ արվեստի և թատրոնի մասին) ուսումնասիրությանը հայ իրականության մեջ չեն անդրադարձել: Առաջին անգամ հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու ժան ժընեի պիեսներում արձարձվող թեմաներին, որոնցում ներկայացվում է միայնակ, հասարակությունից օտարված, շփոթահար մարդկային էակների հակասական ներաշխարհը և քննարկվում են ազատության բռնադատման, գենդերային և ռասայական խորականության խնդիրները: Ժեմաները, որոնք պատճառ էին հանդիսացել, որ ժընեն գրեր իր պիեսները, դժբախտաբար, այսօր ավելի արդիական են, թեև, անցել է կես դարից ավելի:

## ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Սույն ատենախոսության ուսումնասիրության մեջ առաջադրված հիմնական նպատակը՝ ժան ժընեի դրամատուրգիայի քննությունն է և դրա առանձնահատկությունների բացահայտումը 20-րդ դարի երկրորդ կեսի ֆրանսիական դրամատուրգիայի համատեքստում:

Վերոնշյալ նպատակը պահանջում է հետևյալ խնդիրների լուծում.

- Ներկայացնել մոդեռնիզմի և հետմոդեռնիզմի առավել հայտնի դրամատուրգներին և քննարկել նրանց պիեսների առանձնահատկությունները:
- Քննարկել մոդեռնիզմի մեծագույն ներկայացուցիչներից մեկի՝ Անտոնեն Արտոյի «Դաշտանության թատրոն» սկզբունքներն ու դրանց գաղափարական արձագանքները ժան ժընեի ծիսական թատրոնի մասին տեսական տեքստերում, ինչպես նաև ներկայացնել դասական դրամայի հիմնական կատեգորիաներից ազատագրված նոր թատրոնի մասին նրանց տեսակետները:
- Ներկայացնել ժան ժընեի ստեղծագործական մեթոդի ծևավորման ուղիները:
- Կատարել պիեսների տեքստերի և կերպարների համակողմանի, գրականագիտական վերլուծություն՝ երևան հանելով ժան ժընեի դրամաների ժանրային և ծևային առանձնահատուկությունները:
- Հիմնավորել, որ ժընեի պիեսների ծեսերը, որոնց հիմքում ներառված են անտիկ թատրոնի տարրերը (ժեստ, դիմակ, գրիմ), ներկայացումը պատրանքի ծևափոխելու և թատերական էսթետիկ աշխարհ ստեղծելու միջոց են:

## **ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Աշխատանքը կատարելիս կիրառվել է գրականագիտական վերլուծության համադրական մեթոդը, որի միջոցով ներկայացվել է 20-րդ դարի ֆրանսիական դրամատուրգիայի համատեքստը՝ առկա թեմատիկ հիմքերի և դրամատիկ ոճերի համեմատությամբ: Բացի այդ տիպարանական-վերլուծական մեթոդի միջոցով դիտարկվել են սույն ուսումնասիրության շրջանակներում ընտրված պիեսների տեքստերն ու կերպարները, նաև մեկնաբանվել են այիններում քննարկվող սոցիալական, քաղաքական թեմաները: Ուսումնասիրության հիմնական նյութը ժընեի՝ թատրոնի մասին տեսական տեքստերն են, քննադատական հոդվածներն ու դրամաների թեմատիկ հիմքերը: Ստեղծագործությունների մեջբերված թարգմանությունները մերն են:

## **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ**

Սույն աշխատության մեջ՝ օգտվելով ժան ժընեի ստեղծագործությունների վերաբերյալ՝ բազմաթիվ գրականագիտական վերլուծություններից և քննադատական հոդվածներից, ի մի են բերվել և հանգամանալից ներկայացվել ժան ժընեի դրամատուրգիայի բովանդակային, ոճական և թեմադրման առանձնահատկությունները՝ ավելացնելով մերը: Մարտին Էսլինը, ընդհանուր եզրեր գտնելով ժընեի և արսուրդի թատրոնի ներկայացուցիչների պիեսների թեմաների միջև, նրան համարում է արսուրդի թատրոնի ներկայացուցիչ, ինչին մենք համամիտ չենք: Ուստի համեմատվել են ժընեի և արսուրդի թատրոնի ներկայացուցիչների ստեղծագործությունները և ներկայացվել են նրանց պիեսների կերպարային համակարգի և գրելառի հիմնական տարրերությունները: Փորձ է արվել նաև ներկայացնել ժան ժընեի գեղագիտական հայացքները նոր թատրոնի մասին և ցույց է տրվել, թե տեսությունն ինչպես է դրսևորվում նրա պիեսներում:

## **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Ասենախոսության նյութերն ու արդյունքները կարող են կիրառվել ինչպես բուհական դասընթացների ժամանակ, այնպես էլ հիմք դառնալ 20-րդ դարի կեսերի ֆրանսիական դրամատուրգիայի մի շարք հարցերի ուսումնասիրությունների համար:

## **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ**

Աշխատանքը քննարկել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ ռոմանագերմանական բանասիրության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը: Ատենախոսության հիմնադրույթները զեկուցվել են Երևանի Վ. Բրյուսովի անվ. պետ. լեզվաբանական համալսարանի «Գրականության արդի հիմնխնդիրներ» (Երևան, 2015), «Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ» (Երևան, 2016), «Գրականության արդի հիմնխնդիրներ» (Երևան, 2016), գիտաժողովներում << ԲՈՀ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական ամսագրերում :

## **ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, գրականության ցանկից: Աշխատանքի ծավալը կազմում է 153 էջ:

## **ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

Ներածության մեջ ներկայացված են Ժան Ժրնեի դրամատուրգիայի բովանդակային, ոճական և թեմադրման առանձնահատկությունների համառոտ նկարագիրը, հիմնավորված են ընտրված թեմայի արդիականությունը, շարադրված են աշխատանքի նախատակն ու խնդիրները, ընդգծված է գիտական նորույթը: Շմվարկված են ատենախոսության թեմային որոշակիորեն առնչվող աշխատությունները: Ներկայացված են ատենախոսության կառուցվածքը՝ յուրաքանչյուր գլխի բովանդակության համառոտ շարադրմամբ:

## **ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ**

### **ԹԱՏԵՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՆՈՐ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 20-ՐԴ ԴԱՐԻ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅՈՒՄ**

#### **1.1. 20-րդ դարի ֆրանսիական դրամատուրգիայի պատմամշակութային համատեքստը. ընդհանրություններ և հակադրություններ**

20-րդ դարի երկրորդ կեսի ավանգարդի ամենահայտնի ուղղություններից էր «նոր թատրոնը», որն էլ վճռորոշ դարձավ ֆրանսիական թատրոնի նորացման հարցում: Այն զարգացման գագաթնակետին հասավ 1950-ական թվականներին և իր ազդեցությունը շարունակեց մինչև 1970-ական թվականները: Միևնույն ժամանակ «նոր թատրոնը» անվանում են «ավանգարդի թատրոն»,

«հակաթատրոն», «ծաղրուծանակի թատրոն», «պարադրսի թատրոն», «աբսոլյուտագործություն»:

«Նոր թատրոն» դասակարգմանը պարտական ենք քննադատ Ժընըվիլ Սեռոյին և նրա «Նոր թատրոն» պատմություն» գրքին, իսկ «աբսոլյուտի թատրոն» տերմինն առաջարկել է Մարտին Էսիխն իր «Աբսոլյուտի թատրոն» գրքում: Նա առաջինն էր, որ էժեն Իոնեսկոյին, Սամուել Բեկետին, Արթուր Ադամովին, ժան Ժընեին ներկայացրեց որպես աբսոլյուտի թատրոնի դրամատուրգներ: Ըստ Մ. Էսիխնի՝ նրանց նորարարությունն ամենից առաջ դասական թատրոնի ավանդույթները նոր ձևով ներկայացնեն էր, նոր իրականությանը համապատասխանեցնելը: Մարտին Էսիխնը նշում է աբսոլյուտի թատրոնին բնորոշ տարրերը՝ մնջախաղ, աճպարարություն, մարմնի պլաստիկ շարժումներ, զավեշտախաղ, որն անվանում է անհմաստ ու անհեթեթ և, ի վերջո, պատրանքային ու մղջավանջով լի տեքստերը, որոնք հաճախ ունեն գուայլաբանական իմաստ:

Ըստ Ժ. Սեռոյի՝ «Նոր թատրոնը» առաջինն է, որ ներկայացնում է կեցության աբսոլյուտի իրավիճակներ՝ աբսոլյուտ բեմականացման մեջ: Միայն աբսոլյուտի թատրոնի հեղինակներն են, որ ստեղծեցին թատերական նոր ձևեր, հաղոցականի տակ դրեցին լեզվի՝ որպես հաղորդակցման միջոցի կարևորությունը, և բեմի վրա ներկայացրեցին մեր կեցության անհեթեթ ու անհմաստ պահեր, «[...] որոնք կուտակվում են պահերի վրա և ի վերջո առեղծվածային ձևով ստեղծում մի շարունակություն, որն անկախ որևէ պատումից և որևէ պերսոնամից, ոչ այլ ինչ է, եթե ոչ գոյության գաղտնախորհուրդ գգացում»:<sup>1</sup>

Խորասուզվելով՝ աբսոլյուտի մեջ՝ նոր թատրոնի դրամատուրգները, խառնելով երևակայությունն ու պատրանքը, հաճախ ամենասանձ գգայախարությունը, կրկնվող գործողություններն ու գործողության վայրերը, մեկը մյուսին լրացնող զոյլ կերպարները, որոնք հեշտությամբ անհետանում են և կրկին հայտնվում, պատկերում են դարաշրջանին հասովկ ոգին, ներկայացնում են աշխարհի ու մարդ արարածի բախումը, ով իրեն օտար ու միայնակ է զգում այս աշխարհում: «Ես այն գգացողությունն ունեմ, որ կյանքը մղջավանջ է, որ այն ծանր և անտառնելի է, ինչպես վատ երազը: Նայեր ձեր շորջը՝ պատերազմներ, աղետներ, դժբախտություններ, ատելություն, հալածանք, խառնաշփոթ, մահ, որոնք մեզ վերահսկում են, խսում ենք և իրար չենք հասկանում մի աշխարհում, որը կարծես թե տեսնի մեջ է»<sup>2</sup>:

Ամեն ինչ թույլատրված է այս թատրոնում, բայց միայն երգիծանքի միջոցով՝ նաև նյութականացնել տագնապներն ու պատրանքները, մարդկային ցեղի վախս: Աբսոլյուտի թատրոնում ոչ միայն ցանկալի է, այլև խորհուրդ է տրվում օգտագործել թատերական աբսեսուարները՝ «կենդանացներ» դեկորները: Առաջին հայացքից թվում է, թե աբսոլյուտի պիեսները դուրս են տրամաբանությունից «ո՛չ սյուտե, ո՛չ

<sup>1</sup> Սամուել Բեկետ, Գոյոյին սպասելիս, Երևան, Ակտուալ Արվեստ, 2010, էջ 8:

<sup>2</sup> Eugene Ionesco, Notes et Contre-Notes, Paris, Gallimard, 1962, p. 164.

կառուցվածք [...] պարզապես հաջորդականություն առանց պատճառահետևանքային կապի, անբացատրելի արկածներ կամ հոգական վիճակներ, աննկարագրելի խճճվածություն, բայց աշխույժ իրարանցումներ, ոչ հետևողական կրծեր՝ խորասուզված հակասությունների մեջ»<sup>1</sup>:

Թվում է, թե արսուրի թատրոնի դրամատուրգները ձևափոխել են թատրոնը կրկեսի՝ ցուցադրելով գրոտեսկային պատկերներ, որոնք արդեն իսկ զավեշտայի են իրենց անհեթեթությամբ: «Կոմիլը տրագիկ է, իսկ մարդու տրագետիան զավեշտայի: Իմաստից զուրկ էակները կարող են միայն գրոտեսկային լինել, իսկ նրանց տանջանքը կարող է միայն ծիծաղելիորեն ողբերգական լինել»<sup>2</sup>, - ասում է Էժեն Իոնեսկոն, ով առաջարկում է վերաբառնալ թատրոնի ոչ խորային ձևերին (Ժեստ, մնջախաղ), մերժում է լեզուն որպես երկխոսության արտահայտման միջոց, այն չի միավորում, այլ ընդհակառակը՝ բաժանում է:

«Նոր թատրոնը» կրում է Աֆրեդ Ժարրիի և Գիյոմ Ապոլյոների, ինչպես նաև սյուրուալիստների ազդեցությունները: Աֆրեդ Ժարրիի «Թագավոր Յութիոն»-ի (Ubu roi) բեմադրությունը 1896թ. դեկտեմբերի 10-ին և Գիյոմ Ապոլյոների «Տիրեսիասի կրծերը» 1917թ. շրջադարձային էն ֆրանսիական թատրոնի համար: «Թագավոր Յութիոն»-ն շատերը համարել են մոռենիզմի թատրոնի առաջն այիտու:

Թե՛ Ա. Ժարրիի, թե՛ Գ. Ապոլյոների այեսների ցուցադրումը հսկայական աղմուկ են առաջացնուած: Ենմի վրա ազատ արձակելով անսանծ երևակայությունն ու անհեթեթությունը՝ այս երկու դրամատուրգները ներկայացնում են վերացական մի աշխարհ, որտ ամեն ինչ հնարավոր է: Այս պիեսների աննախադեպ կոպիտ ու գորեկիկ լեզուն մերժում և տիհաճության զգացում է առաջացնում հանդիսատեսի մեջ, քարուքանդ է անում իրական աշխարհի մասին սովորական պատկերացումները և փոխարենը ներկայացնում է նրա ծաղրանկարային պատկերը:

«Նոր թատրոնի» պիեսները նոյնպես հեղեղված են երազանման կամ պատրանքային իրավիճակներով, ինչու են անհեթեթ և անիմաստ երկխոսություններ, առկա է իրավիճակների ծայրահեղ չափազանցություն, որոնց միջոցով արսուրի դրամատուրգը փորձում է ներկայացնել անհեթեթություններով լի մարդկային լյանքը: «Ես կարող եմ ասել, որ իմ թատրոնը երգիծանքի թատրոն է: Վերջինս չի պատկերում որոշակի հասարակության խավի, որը ծիծաղելի է թվում: Սա հենց մարդն է»<sup>3</sup>:

Զավեշտն ու ողբերգականը՝ միաժամանակ հակասելով իրար և միաձուլվելով, կրկնվում են փոլային զարգացմամբ: «Դասը» պիեսի ուսուցիչը ամեն անգամ դասի վերջում սպանում է իր աշակերտին, Վլադիմիրը և Էստրագոնը անհոյս սպասման մեջ են ժամանակից և տարածությունից դուրս: «Նեգրերը» անվերջ կրկնում են սպիտակամորթ կնոջ սպանության ծեսը: Այս բոլոր

<sup>1</sup> Martin Esslin, Le théâtre de l'absurde, Paris, Buchet/Chastel, 1971, p. 222.

<sup>2</sup> Eugène Ionesco, Notes et Contre, Paris, Gallimard, 1962, p. 61.

<sup>3</sup> Eugène Ionesco, Notes et Contre, Paris, Gallimard, 1962, p. 190.

կերպարները դատապարտված են ճակատագրով՝ անվերջ կրկնելու միևնույն անհեթեթ գործողությունները: Իհարկե, այս կերպարները հունական դրամաների ողբերգական հերոսները չեն, այլ դրամատիկ էակներ, որոնց հասկանալիքնականայի դատապարտվածությունը ոչ այնքան կարեկցանք է առաջացնում, որքան վախ, նողկանք, անելանելի դժբախտության զգացում:

Ա. Արտոն, ինչպես և նախորդ հեղինակները, նոյնպես իրաժարվում է թատրոնական հոգերանական կերպարի և իրականության հատակ պատկերումից, պիտիսի գաղափարական և ոճական միասնությունից, առավելությունը տախիս է հնագոյն թատրոնի ծներին, իսկ նրա «նոր կերպարը» կորցնում է հոգերանական անհատականությունը՝ վերածվելով ավելի շատ վերացական, քան գործող կերպարի: Արտոն կերպարների այսպիսի տեսակը անվանում է «նյութականացված մղձավանջ»:

Ա. Արտոյի նկարագրածին նման կերպարներ կծնվեն ավելի ուշ Ս. Բեկետի, Է. Իոնեսկոյի պիեսներում՝ «համր կերպարներ՝ սահմանափակ շարժումներով»: «Աթոռները» պիեսում՝ հետորը, «Պարտի զոհերը» պիեսում՝ տիկինը, «Անշահախնդիր մարդասպանը» պիեսում՝ մարդասպանը: Վերջապես Բորիս Վիանի «Կայսրություն կառուցողները» պիեսում՝ Շմյուրի կերպարը, որը համարյա նոյնությամբ կրկնում է Ա. Արտոյի «նոր էակի նկարագիրը»:

Այսպիսով, կարող ենք վստահորեն պնդել, որ Արտոն ուղղակիորեն իր ազդեցությունն ունեցավ արտուրի թատրոնի ներկայացուցիչների վրա:

Մենք կարծում ենք, որ թեև բազմաթիվ նմանություններին՝ ժընեն առանձնանում է ասելիքով իր ժամանակի դրամատորգներից: Ժընենի թատրոնը տարբերվում է արտուրի թատրոնից նախնառաջ լեզվական փայլուն ոճով: Ժընենի լեզուն շքել է և դյուրական, բազմերանգ և հակասական, կրում է բարոլկոյի ոճի որոշակի ազդեցությունը: Ակնհայտ է, որ նրա պիեսների կերպարները անհրաժեշտաբար չեն, որ շփում են մյուս կերպարների հետ, այնուամենայնիվ ժեստերը, գրիմը, թատերական կոստյումները, որոնք առկա են նաև ենք Բեկետի, Իոնեսկոյի մոտ, ժընենի թատրոնի նոյնքան արժեքավոր ատրիբուտներն են, որքան լեզուն: Եթե նա գրում է հեղափոխության («Պատշգամբը»), ուսայական խտրականության («Նեգրերը»), գաղութատիրության դեմ պայքարի մասին («Շերուավարագոյնները»), ապա ցոյց է տախիս համամարդկային մենությունը, տագնապը, տառապանքը: «Նրա պիեսները արտացոլում են հայելիների աշխարհը ընկած հուսահատ ու միայնակ մարդուն: Անխոսափելի մի թակարդ՝ անվերջ զարգացող պատկերներով, որոնք իր անձի աղավաղված արտացոլանքներն են՝ քողարկված ստերով, երևակայություններ՝ պատկերված երևակայություններով, մղձավանջներ՝ ծնված մղձավանջներից՝ մղձավանջներում»<sup>1</sup>, - գրում է Մ. Էսլինը:

1945-ից մինչև 1950-ական թվականների վերջը ժան Կոկտոն անվանում է «Խոռովության դարաշրջան», որի ավարտը նշանավորվեց վերադարձով 1910-20-ական թվականների թատերական նորարարություններին և 1930-40-ական

<sup>1</sup> Martin Esslin, Le théâtre de l'absurde, Paris, Buchet/Chastel, 1971, p. 151.

թվականների «ըմբոստացում օրենքների դեմ» ավանդույթներին՝ «[...] միավորելով Ս. Մալարմեի, Մ. Մետերիխնի, Լուտրեամոնի և Ա. Ժարրիի դարաշրջանի համարձակ մարտահրավերը հանճարեղության՝ 40-50-ական թվականների ավանգարդի թատրոնի հետ»<sup>1</sup>:

Այսպիսով «նոր թատրոնի» դրամատուրգները իրենց դարի, ապրած ժամանակաշրջանի զավակներն են, քանի որ նրանք, առաջ քաշելով գոյության անհերթը ու անհմաստ լինելու գաղափարը, ինչը թելադրված էր մոդեռնիստական ժամանակաշրջանի իրադարձություններով (պատերազմներ, ատոմային ռումբի պայթուն, աշխարհի մոտալուս կործանման մասին հայտարարություններ), պատկերում են Աստծո գոյության հավատը կորցրած անորոշության և մենության մեջ խորասուզված 20-րդ դարաշրջանի մարդուն և նրա հուսահատ փորձերը՝ գտնելու կյանքի իմաստը, իր գոյության իմաստն աշխարհում, գտնելու կամ էլ պարտվելու վերջնականապես:

## 1.2. Ժան Ժընեի ստեղծագործական ուղին

20-րդ դարի ֆրանսիական գրականության մեծագույն գրողի՝ Ժան Ժընեի (1910-1986 թթ.) անունը հայտնի դարձավ շատ ավելի վաղ, քան ընթերցողների լայն շրջանակին հասու կրտանային նրա ստեղծագործությունները: Ժան Ժընեն, հմտորեն միավորելով իր կյանքի իրադարձություններն ու ոռմանտիկ հնարանքները, կարողացավ հայթահարել իր ճակատագիրը, ինքնություն, ապա ճանաչում ու հոչակ ստեղծել իր համար՝ չնայած իր ստեղծագործություններում արտահայտած խնդրահարույց տեսակետներին:

Ժան Ժընեն ծնվել է 1910թ. դեկտեմբերի 19-ին: Հայրը անհայտ է, մայր՝ Գաբրիել Ժընեն, հրաժարվում է մեկ տարեկանը չլրացած երեխայից: Ժընեն հայտնվում է պետական հոգածության ներքո: Նրան խնամելու և դաստիարակելու համար որոշակի գումարի դիմաց հանձնում են արհեստագործ Շառլ Ռենիեի ընտանիքին:

Ժընեն երբեք չի հաշտվել ծնողներից, հատկապես մորից լրված լինելու փաստի հետ: Հայտնի է, որ երգել է եկեղեցական երգչախմբում և այժմ է ընկել լատիներենի փայլուն արտասանությամբ: Դպրոցում նոյնպես լավ է սովորել սիրել է կարդալ արկածային և դետեկտիվ վեպեր: Երբ Ժընեն տասը տարեկան էր, տեղի է ունենում մի ճակատագրական դեպք, որը խոր հետք է թողնում Ժընեի հոգու: «[...] ուսուցչուին հանձնարարել էր գրել շարադրություն: Յուրաքանչյուր աշակերտ պետք է նկարագրեր իր տունը, ես նկարագրեցի իմը, պարզվեց, որ իմ շարադրությունը, ըստ ուսուցչուի, ամենագեղեցիկն էր: Նա այն կարդաց բարձրաձայն, և բոլորը ծաղրութանակի ենթարկեցին ինձ՝ ասելով՝ բայց դա իր ընտանիքը չէ, նա վերցնովի երեխա է, և այդ ժամանակ այնպիսի՝ դատարկություն,

<sup>1</sup> Jean Cocteau, B. Vian, Theatre I, Paris, Flammarion, 1993, p. 81.

այնպիսի՝ նվաստացում ապրեցի: Ակնթարթորեն դարձա օտարերկրացի: Օ՛, ասել որ ես ատեցի Ֆրանսիան՝ նշանակում է ոչինչ չասել: [...] հետագայում ես ինձ հարազատ էի զգում միայն նվաստացածների հետ»<sup>1</sup>:

Յոթ տարի համայնքային դպրոցում սովորելուց հետո 1923-ին Ժընեվա առաջինն է ստանում միջնակարգ դպրոցի վկայականը: Այլև չի շարունակում ուսումը որևէ պետական հաստատությունում, բայց ողջ կյանքում չի դադարում ընթերցել:

1926-1929թթ. անցկացրել է անչափահասների ուղղիչ գաղութում՝ Մետրեում, այդ ժամանակաշրջանը բազմից նկարագրել է իր վեպերում: Որպեսզի օրինական (մաքուր) փաստաթյուր ստանա, կամավոր գինվրագրովիս և ծառայում է բանակում 1929-1936թթ.: Այս տարիները Ժընեվա ընթերցանության մեծագույն ժամանակաշրջանն էին: Մետրեում բացահայտում է Պ. Ռոնսարին, Ժ. Ներվային, Ա. Ժիդին, Ֆ. Մորիակին, իսկ Ֆ. Դոստոևսկուն համարում է իր ուսուցիչը: Ա. Ռեմբոյին առաջին անգամ ընթերցել է 1937թ.: Նոյնիսկ գողություն անելիս էլ հետաքրքրություն է դրսուրում գրքերի նկատմամբ: Մի քանի անգամ ծերբակալվում և դատապարտվում է Մ. Պրուստի, Պ. Վեոլենի հազվագյուտ հրատարակության գրքերը գողանալու պատճառով:

Ժընեվա 1942-1947թթ. գրում է իինգ վեպ, երեք պիես, բազմաթիվ պոեմներ (մեծ մասը անհետացած), ֆիլմի սցենարներ, մեկ բալետ: Այս գործերի մեծ մասը գրվել է կալանավայրում, ինչը վկայում է, որ բանտը և հանցագործ աշխարհը ոգեշնչել են նրան:

1949թ. ժան Կոկտոյի և ժան Պոլ Սարտրի միջնորդությամբ և խնդրագրով Ֆրանսիայի Հանրապետության նախագահը ներում է շնորհում Ժընեվա՝ չեղյալ համարելով բոլոր հանցանքները, սկսած պատերազմի տարիներից: Գորդին ցմահ բանտարկություն էր սպասվում: Ժընեն դադարում է գրել, և այսպես՝ գրեթե վեց տարի:

Երբ Ժընեն 1954-1955թթ. վերսկսեց դրամատուրգի մոլեզին ստեղծագործական աշխատանքը, նրա գրելանը ակնհայտորեն փոխվել էր: Ըստ Ժընեագետ Ալբեր Դիշիի՝ Ժընեն 44 տարեկան էր, երբ վերսկսում է գրել, 1954թ. գրում է չորս պիես՝ «Պատշգամքի» առաջին տարբերակը, «Նեգրերը», նոյեմբերին ավարտում է «Նա» փոքր պիեսը (հրատարակված՝ հետմահու), դեկտեմբերին սկսում է «Շերտավարագույրները» պիեսը: 1955 թվականը այսպիսով, համարվում է ժան Ժընեի ստեղծագործական երկրորդ շրջանի սկիզբը՝ կապված թատրոնի հետ:

Երկրորդ փուլի պիեսները, որոնք Ժընեն գրեց 1955թ.-ից հետո լրաց մտորումների արդյունք էին, և հետևաբար տարբերվում էին նախկինում գրված պիեսներից («Բարձր հսկողություն», «Աղախինները», «Հիանալի է»):

1 Chronique des années 1910-1944 par Albert Dichy et Pascal Fouché, Jean Genet Matricule 192.102, Paris, Editions Gallimard, 2010, p. 60.

Գրելով և բազմիցս վերամշակելով իր պիեսները՝ ժընեն միևնույն ժամանակ գրում է նաև մեկնաբանություններ՝ ինչպես խաղալ այդ պիեսները, քանի որ նրան չին գոհացնում դրանց բեմականացումները: Իր խորհուրդները ժընեն տպագրում է պիեսների տեքստերին կից՝ դրանցում ներկայացնելով ժամանակակից թատրոնի մասին իր տեսակետները:

Ժընեի՝ թատրոնի մասին տեքստերը տեսականորեն կարելի է բաժանել երեք խմբի, թեև դրանք ուղղակիորեն փոխապակցված են: Առաջին տեքստերն անմշականորեն վերաբերում են ային պիեսները բեմադրելով՝ «Ինչպես խաղալ «Պատշգամքը»», «Խոստովանություն» (իրատարակված «Պատշգամքի» 2-րդ տարբերակի հետ 1960-1962թթ.), «Նեգրերը խաղալու համար», «Նամակներ Ռոժե Բլենին» (1967): Ժընեն օգնում է Ռոժե Բլենին բեմադրելու «Եերտավարագույրները» պիեսը՝ գրելով նամակ-ցուցումներ ներկայացման ձևավորման վերաբերյալ (դեկորներ, լուսային էֆեկներ, թատերական հագուստներ, գրիմ-դիմահարդարում, դերասանների խաղ՝ ժեստեր), բայց պիեսի կերպարների գրական վերլուծության ոչ մի տող: «Խոսել պիեսի շարադրանքից նշանակում է հիշատակել իրենից ոչնչ չներկայացնող մի աշխարհ և իրադարձություն, բայց ընդհանուր առմամբ թատրոնի մասին է, որ ես կցանկանայի խոսել»<sup>1</sup>:

Երկրորդ խմբի տեքստերը ներկայացնուած են ժընեի գեղագիտական տեսակետները նոր թատրոնի մասին («Նամակ ժան ժակ Պովերին» (1954), «Տարօրինակ խոսք... մասին» (1967)):

Երկրորդ խմբի տեքստերը վերաբերում են արվեստին և էթիկային՝ «Ալբերտ Զիակոմետիի արվեստանցքը» (1957), «Լարախսաղացը», «Ռեմբրանտի գաղտնիքը» (1967): Այս փայլուն էսեները թեև վերաբերում են քանդակագործության ու նկարչությանը, լարախսաղացությանը, այնուհանդերձ դրանց կենտրոնում թատրոնն է՝ էլ ավելի խոր փիլիստիքայական մոտեցումներով:

Ժընեն մահացել է 1986թ. ապրիլի 15-ին:

### 1.3. Անտոնեն Արտոն և ժան Ժընե՝ գեղագիտական թատրոնի տեսություն

Հայոնի չէ՝ այս երկու ստեղծագործողները երբևէ հանդիպել են, թե ոչ, բայց որ ժընեն հետաքրքրված է եղել Ա. Արտոյով, հաստառում է ժ. Ժընեի առաջին հրատարակիչ Մարկ Բարբեզան: Գրող և թատրոնի տեսաբան Բերնար Դորը գրում է, որ ժընեն ոճն արմատապես տարբերվում է Ա. Արտոյի ոճից,<sup>2</sup> իսկ «Արսուրի թատրոնի» և ժան Ժընեի պիեսների հայտնի բեմադրիչ Ռոժե Բլենը վստահաբար հայտարարում է. «Ժընեն չի ոգեշնչվել Արտոյից: Ժընեն Արտոն քիչ է կարդացել: Ժընեի դաժանությունն ավելի պարզ է, ավելի դասական, ավելի ճակատագրական»:

<sup>1</sup> Jean Genet, Fragments ... et autres textes, Paris, Gallimard, 1990, p. 101.

<sup>2</sup> Bernard Dor, Genet ou le combat avec le théâtre, Théâtre réel (1967-1970), Paris, Seuil, 1971, p. 178.

Սա այն դաժանությունն է, որ աստվածները սահմանել էին մարդկանց համար այն ժամանակ, երբ ավելի մոտ էին նրանց<sup>1</sup>: Այնուամենայնիվ, այս երկու դրամատուրգների որոշ մտքեր այնքան նման են, որ չենք կարող չըննարկել:

Ա. Արտոն իր «Դաժանության թատրոնը» մանիֆեստում հայտարարում է, որ եվրոպական մշակույթի ճգնաժամի պատճառը վախն է իրականության հանդեպ: Որպես հետևանք այդ վախի՝ մենք բոլորս էլ մեկս մյուսի հետ շփման ժամանակ դիմակ ենք կրու: Միայն թատրոնի միջոցով կարենի է դիմակայել այդ վախին, միայն այստեղ մարդը կկարողանա տեսնել իր իրական դեմքն առանց դիմակի: Ավանդական թատրոնը, որպես այդպիսին, այլև չի գրավում հանդիսատեսին: Հարկավոր է ստեղծել այնպիսի թատրոն, որ մարդկանց սրաթիեցնի քնից, արքնացնի զգացմունքները և միրտը, ստիպի վերապրել այն ամենը՝ ինչ կա սիրո, հանցագործության, պատերազմի և խելազարության մեջ: Ահա թե ինչու է անհրաժեշտ, որ թատրոնում բեմադրվեն ներկայացումներ հայտնի մարդկանց դաժան հանցագործությունների և ոչ մարդկային զրիարերությունների մասին: Ցուցադրվող հանցագործությունը պետք է ավելի ազդեցիկ լինի, քան իրականուած տեղի ունեցած հանցագործությունը: Ըստ նրա՝ անհասկանալի ճիշերը, առանձին կցկոտը և անկապ բառերն ավելի արտահայտիչ են, քան պարզ և սովորական միտք արտահայտող նախադասությունները: Ա. Արտոն անկեղծորեն հավատում էր, որ բռնության և դաժանության տեսարանները, որոնք կցուցադրվեն հանդիատեսին, ընդունակ են մաքրագործել մարդուն: Եվ ընդհանրապես, թատրոնում մարմնի ճկուն խաղը, միմիկան, առեղծվածային պարերը, ձայնային և գունային էֆեկտները պետք է գերակայեն պիեսի գաղափարական բովանդակությանը:

Ժընեն, ինչպես Ա. Արտոն, մեզ առաջարկում է քաջություն ունենալ և հանել մարդկային դիմակները: Ըստ Ժընեի իրականությունը ձանձրայի և պարզունակ: Որպեսզի ձևափոխեն այն, մարդիկ խաղում են՝ ներկայացնելով իրենց և որիշներին ոչ այնպես, ինչպիսին որ կան իրականում, այլ ինչպիսին, որ ցանկանում են տեսնել: Հենց սա էլ իրականության ձևափոխումն ու լյանքի թատերականացումն է, ուր բոլոր մարդիկ հանդես են գալիս որպես դերասաններ և ունեն որոշակի դերեր: Ե՛վ Ժընեն, և՝ Արտոն թատրոնի կարևոր դերը տեսնում են մարդու բուն էռության, նրա գաղտնի երազանքների և իրական կրծերի բացահայտման մեջ, որն անհնար է իրական լյանքում: Բեմի վրա մարդու ներաշխարհն ու գաղտնի ցանկությունների ցուցադրումը երկուսն էլ տեսնում են ծեսի վերածված թատերական գործողությունների միջոցով:

Պետք է ընդգծել, որ Ժընեն չի ցանկանում, որ իր թատրոնը դարձնեն զվարճանքի մի ծև կամ հանդիսատեսին բարոյախտության դասեր տալու միջոց, ինչը շատ շուտ կմոռացվի: Բեմը պետք է վերածվի զարմանքի, թովչության և զմայլանքի վայրի: «Ներկայացումը, որը չի հուզում մեր հոգին, զուր է: Այն անօգուտ

<sup>1</sup> Bettina Knapp, Entretien avec Roger Blin, «Genet» // revue Obliques, N° 2. 3e trimestre, 1972, p. 41.

է, եթե ես չեմ մտածում իմ դիտածի մասին կամ էլ չեմ անդրադառնում դրան ներկայացնումից հետո, երբ վարագույր ցած է իջնում, կարծես թե այն չի էլ եղել»<sup>1</sup>: Պետք է փառարանել կերպարը (իրական կյանքը) և արտացոլանքը (քատերական էսթետիկ իրականություն) և ամբողջովին մասնակցել թատերական ծիսակարգին, որը ենթադրում է փախուստ իրականությունից և կոնկրետ ժամանակից դեպի արվեստի հավերժություն:

«Տարօրինակ բառը ... մասին» հոդվածում Ժընեն է՛լ ավելի է զարգացնում թատրոնի մասին իր էսթետիկ հայացքներն ու թատերական գործողությունը ծեսի վերածելու գաղափարը: Հոդվածում Ժընեն ասում է, որ մարդիկ ավելի ու ավելի են տեխնիկապես կատարելագրութում թաղման արարողությունները՝ զրկելով իրենց թատերական հիասքանչ գործողություններից: Ժամանակակից հասարակությունը փորձում է ազատվել մահվան մասին անհանգուտացնող մտքերից՝ գերեզմաններ սարքելով քաղաքներից հեռու կամ արվածաններում, որը, ըստ Ժընեի, սպառնում է թատրոնի գոյությանը: Ժընեն առաջարկում է թատրոնը տեղափոխել գերեզմանոց. «Թատրոնը գերեզմանոցում տոն է: [...] Թատրոնը պետք է հնարավորինս մոտ լինի ստվերին, որը թագավորում է մեռյալների հանգստավայրում: [...] Մահն այստեղ միաժամանակ կլինի ավելի մոտ և ավելի հեշտ, իսկ թատրոնը՝ ավելի լուրջ», կամ էլ գերեզմանատունը, ինչու չէ, նաև դիակիզարանը տեղափոխել քաղաքի կենտրոն, որքան հնարավոր է մոտ գործող պաշտոնական թատրոնին՝ հաղորդելով պատշաճ վեհություն և հանդիսավորություն: Թատրոնը կստանա նույնքան կարևորություն, որքան Մայր Եկեղեցին, Արդարադատության պալատը և հուշարձանները»<sup>2</sup>: Ակնհայտ է, որ Ժընեն ցանկանում է արժանապատվություն, ակնածանք և հատկապես առեղծվածի զգացում առաջացնել հանդիսատեսի մեջ թատրոնի հանդես: Պլունկան գրում է. «Ժընեն պատկերում է մի թատրոն, որն ունի գերեզմանոցին բնորոշ առանձնահատկություններ՝ հանդիսավորություն, լրջություն, երկյուղածություն՝ երանգավորված առեղծվածի և պատրանքի զգացումով»<sup>3</sup>:

Այսպիսով, ժան Ժընեի էսթետիկան պարզագոյն հարցադրումներ չի առաջարկում: Նա, ով ցույց է տալիս սարսափը՝ բացառելով կարեկցանքը, անկասկած, հետաքրքրում է հանդիսատեսին: Եվ եթե պիեսը հաջողված է, եթե դերասանների խաղը բարձրակարգ է և եթե տեղի է ոնեցել բար (հերինալ), ձայն (դերասան), հանդիսատեսի հանդիպումը, ապա միայն այս դեպքում մենք ներկա կլինենք փրկարար, բայց ոչ մաքրագործող թատերական էֆեկտի: Ժընեն կարծում է, որ հանդիսատեսը, դիտելով ներկայացնումը, չի փոխի իր տեսակետները, չի

1 Jean Genet, *Fragments ... et autres textes*, Paris, Gallimard, 1990, p. 105.

2 Jean Genet, « L'Étrange mot d'... », dans *Oeuvres Complètes*, t. IV, Paris, Gallimard, 1968, p. 14.

3 Gene A. Plunka, *The Rites of Passage of Jean Genet, The Art and Aesthetics of Risk Taking*. Rutherford, Madison, Teaneck: Fairleigh Dickinson University Press, 1993, p. 129.

մաքրագործվի, այլ, վերապրելով պիեսի տգեղ և շոկային տեսարանները, կբարձրանա նրա ինքնագիտակցությունը, հետևաբար կփրկվի տգիտությունից:

## **ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ ԺԱՆ ԺԸՆԵԻ ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱՅԻ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

### **2.1. Ծիսական խաղը՝ պատրանքի և իրականության սահմանագծին «Աղախինները» պիեսում**

Ժան ԺԸՆԵԻ ամենավաղ շրջանի պիեսներից մեզ են հասել միայն «Աղախինները» (1947) և «Քարձր հսկողությունը» (1949) պիեսները: Առաջինը բեմադրվել է «Աղախինները» պիեսը:

«Աղախինները» պիեսի գործողությունները տեղի են ունենում Լյուիովիկոս 15-ի ոճով կահավորված ննջանայակուա: Երկու քոյքերը՝ Քլերը և Սոլանժը իրենց Տիկնոց բացակայության ժամանակ տարօրինակ խաղը են խաղում՝ հերթով կատարելով մեկ տիկնոց, մեկ էլ աղախնի դերը: Այս խաղը վեր է ածկուա ամենօրյա ծեսի, որի միջոցով քոյքերը փորձուա են ազատվել թե՛ տիկնոց, թե՛ միջյանց նկատմամբ կոտակված սիրուց, չարությունից, ատելությունից՝ խսորեն հետևելով ու մշտապես հիշեցնելով, որ պետք չէ չափն անցնել: Ժընեն այս պիեսում ցոյց է տախս կյանքի թատերականացված լինելը և որքան վտանգավոր է խաղի և իրականության սահմանի թափանցիկությունն ու դրա խախտումը: Մարդը չի ապրում, այլ խաղում է: Իրեն ներկայացնում է այնպիսին, ինչպիսին կուգեր, որ լիներ: Այս խաղի ժամանակ մարդը կորցնում է իրականության զգացումը, երևակայականը ընդունելով դրան ճշմարտություն:

Պիեսի վերջուա Քլերը ընտրություն է կատարում, վերջ է տախս իր կյանքին, բայց ենթադրվում է, որ սպանում է նաև Տիկնոցը, որի դերը բազմիցս խաղացել և նոյնացել է նրա հետ: Ինքնությունների փոխակերպման միջոցով կրում է նրա դիմակը, իսկ չկատարած սպանության համար պատասխանատվությունը կվրի Սոլանժը՝ իրենց հաղթանակի վկան: Այս վերջին գործողությամբ ենթադրվում է, որ Քլերը հաղթահարում է իրենց ճակատագիրը:

Անողոք ճակատագի վճռորոշ դերը Ժընեն ներկայացնում է նաև «Քարձր հսկողություն» պիեսում, որը գրել է իր ստեղծագործական ամենավաղ շրջանում:

«Քարձր հսկողություն» պիեսի սյուժեն կառուցված է բանտարկյաների փոխհարաբերությունների վրա, իսկ գործողությունները տեղի են ունենուա բանտախցում: Բանտախցի առաջին բնակիչը՝ Կանաչ աչքը, մարդ է սպանել: Շատ հավանական է, որ նրան կդատապարտեն մահապատժի:

Բանտախցի մյուս «բնակիչները»՝ տասնյոթամյա անչափահաս Մորիսը և բաներերամյա Լըֆրանը, թեև համարյա պատանիներ են, բայց արդեն հասցել են զգալ անողոք ճակատագի սառը հպումը և իրենց առաջին քայլերն են արել դեպի չարիքը տանող ճանապարհով: Բանտախցում մշտապես լարված մթնոլորտ է, մոլեգին վեճերը իրար են հաջորդուա, զգացվում է մահվան կամ ճակատագի

Ներկայությունը: Ծանր ու խճճված հոգեբանական ընդհարումից հետո Լըֆրանը սպանասրտորեն խեղյամահ է անում Մորիսին, որպեսզի ապացուի, որ ինքը հսկական հանցագործ է: Մորիսն անընդհատ չարամտորեն ծաղրում էր նրան՝ ասելով. «Դու մեր ցեղից չես և երբեք էլ չես լինի այնպիսին, ինչպիսին մենք ենք, նոյնիսկ եթե մարդ սպանես»<sup>1</sup>:

Եվ այսպես «դժբախտությունը» ընտրում է հերթական զոհին: Հասկանում ենք, որ «խիստ հսկողությունը» իրականացնում է, ոչ թե ավագ հսկիչը, որը հայտնվում է պիեսի վերջում և շնորհակալություն է հայտնում հիասքանչ ողբերգություն ներկայացնելու համար, այլ հենց ճակատագիրը, որը սկզբում իր դաժան ու հիպնոսացնող ճանկերի մեջ էր առել Կանաչ Աչքին, իսկ հետո Լըֆրանին: «Իմ դժբախտությունը հայտնվում է ինչ-որ խորքից: Այն իմ մեջ է: Ես ամեն ինչ արեցի դժբախտության հանդեպ սիրուց»<sup>2</sup>:

Եվ այսպես, Ժընեն մարդու ողբերգական միայնության թեման ճակատագրի դեմ հանդիման չի քննարկում էքիստենցիալ ընտրության այն տեսանկյունից, համաձայն որի՝ մարդը պատասխանառու է իր արարքների համար իր և ուրիշների առջև, այլ նրա հերոսները, ինչպես արսուրդի թատրոնի պիեսների կերպարները, գոյատևում են անհմասս աշխարհում, բայց, ի տարբերություն վերջիններին, գիտակցում են իրենց կեցության անհետեթությունը, կյանքը դիտարկում են որպես խաղ, մտնում են խաղի մեջ, ստեղծում են նոր երևակայական իրականություն՝ փորձում են ուղղել իրական իրականության անտանելի հեռանկարը կամ կերպարանափոխվելով դառնալ ուրիշ: Ինքնահաստատվելու համար դիմում են հանցագործության, արդյունքում էլ ավելի են բարոյալքվում և օտարվում, ծեղոք են բերում «հերոսական միայնություն»: Կարող ենք եզրակացնել, որ Ժընենի թատրոնում ազատությունը կերպարի լիակատար մենությունն է, որը տրված է նրան պայքարելու հանուն գոյության:

## 2.2. Ինքնության որոնում՝ կերպարի և արտացոլանքի նույնացումը «Պատշգամբը» պիեսում

Ժընենի դրամատուրգիայի առանձնահատկությունները՝ թատրոնը՝ թատրոնը, կերպար և արտացոլանք, իրականի և անիրականի համարդում, ինչը համապատասխանում է պատրանքը որպես իրականություն ներկայացնելու գրողի ձգումանը, անբաժանելի ամբողջություն են կազմում «Պատշգամբը» պիեսում:

Հայտնի է, որ «Պատշգամբը» պիեսը գրելիս Ժընեն նկատի է ունեցել Խսպանիան, ինչպես նաև ունեցել է անավարտ պիես «Խսպանիա» վերնագրով: Ասենք, որ ըննադատները նոյնպես պիեսի իրադարձությունները մեկնաբանեցին որպես Խսպանիայի քաղաքացիական պատերազմի մասին այլաբանություն, իսկ

<sup>1</sup> Jean Genet, Haute surveillance, Paris, Gallimard, «Folio», 1988, p. 55.

<sup>2</sup> Նոյն տեղում, էջ 66:

Ոստիկանապետը նոյնացվեց բռնապետ Ֆրանկոյի հետ, Ռոժեն մարմնավորում է հանրապետականներին, իրման հենց ինքը՝ Խապանիան է: Ժընեն 1957թ. մայիսին գրական թերթին տված հարցազրույցում ասում է. « [...] իմ մեկնակետը գտնվում էր Խապանիայում՝ ֆրանկոյական Խապանիայում, և հեղափոխականը, որը ամորձատվեց, հանրապետականներն են, որոնք թոյլ տվեցին իրենց պարտությունը: Բայց հետո իմ պիեսը գնաց իր հունով, իսկ Խապանիան՝ իր»<sup>1</sup>:

«Պատշգամբը» պիեսը կազմված է ինը տեսարանից, որոնցից առաջին չորս արարներում դրամատուրգը ներկայացնում է դրամատիկ կերպարներին և հիմնական ծիսական խաղերը, որոնք իրականացվում են «Մեծ պատշգամբ» հասարակաց տան սենյակներում:

«Մեծ պատշգամբ» (Le Grand Balcon) հասարակաց տունը ցնցվում է ոլումբերի պայմանից և գնդացրի կրակահերթերից: Քաղաքում ապստամբություն է բռնկվել, չնայած դրան, «Պատրանքների տունը», (այդպես է նախընտրում անվանել իր հաստատությունը տիկին Իրման,) հաճախորդների պակաս չոնի, քանի որ ծեսի և պատրանքի հրապուրանքն ավելի ուժեղ է՝ քան ապստամբների կրակահերթերից սպանվելու վտանգն ու սարսափը: Այստեղ յուրաքանչյուրը որոշակի վճարի դիմաց կարող է իրագործել իր երազանքները՝ դառնալ խաչված Հիսուս, Եպիսկոպոս, Գեներալ, Դատավոր և այլն, ներել կամ դատապարտել: Հասկանայի է, որ հասարակաց տան հաճախորդները իրենք են ընտրում այս կերպարները և խաղում են այդ դերերը, քանի որ իրական կյանքում չեն կարող լինել այդպիսին: Նրանք գալիս են խաղալու՝ ծևափոխելու իրականությունը, քանի որ միայնակ են, ունեն սարսափելի մենության շատ պարզ գիտակցում: Որպեսզի ազատվեն մենությունից, խաղում են մեկ կամ քազմաթիվ դերեր՝ կերպարի և նրա արտացոլանքի: «Պատրանքների տան» հաճախորդները, մարմնավորելով արևմտյան հասարակության իշխանության ներկայացուցիչներին (Եպիսկոպոս, Դատավոր, Գեներալ) ձգտում են առավելագույնս ճգրիտ ներկայացնել նրանց կերպարը, դառնալ այդ կերպարի կատարյալ արտացոլանքը և ի վերջո լինել դառնալ դրանցից մեկը: Հորինված իրականություն և ամենից առաջ հորինված պատմություն հասարակաց տանը, ինչը մասնակիցները պետք է ներկայացնեն ծայրահեղ նրբանկատությամբ ու սարկազմով:

### 2.3. Պայքար ընդդեմ իրականության՝ հաղթանակած պատրանք

«Պատշգամբը» պիեսում Ժընեն քննարկում է նաև թատրոնուան իրականության ռեախստոերն ցուցադրման մերժումն ու ապստամբության թեման, որը դատապարտված է պարտության: Հեղափոխությունը նոյնպես խարկանք է, ինչպես թատրոնը, քանի որ Ժընեի կարծիքով, բոլոր հեղափոխությունները «ներքին» պլանում ոչինչ չեն փոխում: Ով էլ լինի՝ հաղթող թե պարտվող, նոյն

1 Jacques Lacan, Sur Le Balcon de Jean Genet // Magazine Littéraire, 1993, № 313, p. 53.

կարգավիճակում են: Մի ռեժիմը փոխվում է մեկ այլ բռնատիրական ռեժիմով: Պիեսի հետագա զարգացումը ցոյց է տալիս, թե ինչպես են իրականությունն ու ապստամբությունը թափանցում հասարակաց տան պատերից ներս՝ միաձովվելով թեմականացված երազանքներին, ստեղծում են մի նոր պատրանքային իրականություն, ինչը ոչ այլ ինչ է, եթե ոչ նախկին իրականության հայելանման արտացոլանքը ներկայացված երգիծորեն:

Ապստամբության պարտվելուց հետո իրման, լսելով գնդացրի նոր կրակահերթերի ձայները, տարակուանքով հարցնում է. «Ովեր են ... Մերո՞նք ... թե ապստամբնե՞րը, կա՞մ :

Բանքեր - Ինչոր երազողներ են, Տիկի՞ն»<sup>1</sup>: Այևս անհնար է սահմանազատել կյանքն ու պատրանքը, որոնք շարունակ միաձովվում են այս պիեսում:

Իրման թողնելով թագուհու դերը, վերադառնում է իր հասարակաց տան ծիսակարգերին: Դրսում հնչում են կրակոցներ, ներսում բացարձակ մթություն է: Տիկին իրման առաջարկում է հեռանալ բոլորին մինչև պատրանքների նոր թեմականացումը՝ հաջորդ ներկայացումը: «Պետք է վերադառնաք ծեր տները, որտեղ անկասկած ամեն ինչ ավելի կեղծ է, քան այստեղ ... Դուք պետք է հեռանա՞ք, գնացե՛ք նրբանցքի աջ կողմով: [...]»<sup>2</sup>: Իրմայի այս նախադասությամբ ժան Ժընեն կարծես կրկնում է շեքսափիյան հայտնի ասույթը՝ «կյանքը բեմ է, իսկ մենք դերասաններ»: Կյանքը բեմ է, ուր բոլոր մարդիկ հանդես են գալիս որոշակի դերերով: Կյանքը ոչ պակաս թատրոն է, քան իրական թատրոնը, ուր բոլոր մարդիկ հանդես են գալիս որոշակի դերերով: Ուրեմն ավելի կարևոր է դառնում ոչ թե թատրոնը, ուր հաճախելու համար մարդիկ վճարում են, այլ թատերականացված կյանքը, որտեղ մարդիկ անընդհատ խաղում են և կերպարանափոխվելով ստեղծում նոր իրականություն:

Այսպիսով՝ պիեսում ներկայացվում է կերպարների զարմանալի մի շենք, կերպարներ, որոնք փորձում են բացահայտել իրենց էությունը ծես-խաղի միջոցով: Այս խաղը վերածվում է գոյության սկզբունքի՝ հայտնվելով կեցույթան կեղծված իրավիճակներում և վկայակոչելով բարձրագույն ուժերին, պատկերված կերպարի արտացոլանքն ավելի իրական է դառնում, քան ինքը՝ այդ դերը մարմնավորողը:

1 Jean Genet, Le Balcon, Paris, Gallimard, 2002, p. 152.

2 Նոյն տեղում, էջ 153:

**ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ  
ԺԱՆ ԺԸՆԵՒ ԾԻՍԱԿԱՆ ԹԱՏՐՈՂԻ ՍԻՄՎՈԼԻԿԱՆ**

**3.1. Ապստամբությունը և թատերականացված իրականությունը  
«Շերտավարագույրները» պիեսում**

«Շերտավարագույրները» պիեսը ժընեն սկսել է գրել 1956 թ. սկզբին, երբ Ալֆրում ապստամբություն էր սկսվել գաղութատիրության դեմ: Գրողի նպատակն է ներկայացնել այս պիեսում իրականությունը և միևնույն ժամանակ այն դարձնել անճանաչելի, ծնափոխել թատերական նյութը ծիսականության և ներկայացնել այնկողմնայինը, որը ո՞չ հանդիսատեսը, ո՞չ էլ դերասանները չեն էլ պատկերացնում: Եվ կրկին ժընեն պայքարում է իրականության դեմ հնարանքի միջոցով՝ հոգածերը, իրադարձությունները, վերապրածը պատկերում է նկարներով:

««Շերտավարագույրները», որոնք արդեն կային «Պատշգամբը» պիեսում, - գրում է Մարի Ռըդոնեն, - պատկերում են աշխարհը: Աշխարհը ներկայացվում է այն բանով, ինչը սովորաբար թաքցնում է»<sup>1</sup>: Ընդ որում՝ այս թաքսոնցներն անհրաժեշտ են, քանի որ կան որոշակի բաներ, որոնք չեն կարող ուղիղ իմաստով ասվել: «Իմ բոլոր այինները՝ սկսած «Աղախինները»-ից մինչև «Շերտավարագույրները», որոշակի հորինվածք են, համենայն դեպք են հակված եմ դրան հավատալուն: Այնուամենայնիվ դրանցում մի քիչ դիվանագիտություն կա, և այս իմաստով պիեսներում անուղղակիրեն քննարկվում է քաղաքականությունը: Պիեսները քաղաքականապես չեզոք չեն: Հասարակության հետ երկխոսության մեջ մտնելը միգուցե միակ հնարավոր ուղին է արվեստի այն գործի համար, որը չի հավակնում ուսանելի լինելիք<sup>2</sup>:

Պատմական իրականությունը այստեղ հանդես է գալիս հեռակա ծնով, և եթե պատկերները շատ են ծանրաբեռնված պատերազմական հորինված համազգեստներով, շքանշաններով, ապա դա լոկ բռնատիրական ուժի գաղափարի հաստատում է՝ առանց նկատի առնելու իրական պատմությունը: Ուժը՝ ուժի դեմ, սա վերացական պատերազմ է՝ մարմնավորված անհատական ուժերի, մարդկային տարբեր խավերի և կոլեկտիվ ուժերի կողմից: «Եթե ֆրանսիացիները 1964թ. չեն խաղացել այս պիեսը, պատճառը այն է, որ նրանք տեսան այնպիսի բաներ, որոնք իրականում այդպես չեն, բայց նրանք հակված էին դրան հավատալուն»<sup>3</sup>:

Ակնհայտ է, որ ժան ժընեն իր պիեսներում քննարկում է գաղութատիրության և ապստամբության թեմաներն ընդհանրապես և մերժում է իրականության ռեալիստորեն ցուցադրումը բեմի վրա: Ծաղրանքով է նկարագրում

1 Marie Redonnet, Jean Genet, le poète travesti : portrait d'une oeuvre. Paris, Grasset, 2000, p. 195.

2 Jean Genet, OEuvres complètes, t. 6, L'ENNEMI DÉCLARÉ, textes et entretiens. Paris, Gallimard, 1991, p. 285.

3 Jean Genet, Les Paravents, Paris, Editions Gallimard, 2000, p. XIII .

պատերազմական գործողությունների աստիճանական ծավալումը, անգամ պատերազմական սարսափելի դրվագները ներկայացնում է այլաբանությունների բեկմամբ: Ապատամբությունը իրական է և անիրական: «Շերտավարագույները» պիեսում թատերական իրականության բազմաթիվ օրինակներ կան, բայց ամենաակնհայտ օրինակը մահացածներն են, որոնք տեսնելու համար, թե ինչ է տեղի ունենում ներքընում ապրողների մոտ, նայում են վերև և կարողանում են խոսել միմյանց հետ մի հարկից մյուաք՝ քննարկելով ապրողների գործողությունները:

«Շերտավարագույները» պիեսում իրար բախվում են տարբեր մշակույթների ու տարբեր խավերի ներկայացուցիչներ, իսկ արծածվող թեմաները բազմաթիվ են երկրիմի ու խճճված: Պիեսի գործողությունը տեղի է ունենում արաբական երկրում, որը գաղութացված է Ֆրանսիայի կամ այլ եվրոպական պետության կողմից, որտեղ ապստամբություն է բռնկվել բայց պիեսի առաջին ինը արարներում այս ապստամբությունը ուրվագծվում է Օրտիների ընտանիքի անհերեթ ու ողբերգական պատմության ֆոնի վրա, ինչպես նաև ցոյց է տալիս արար հասարակության ներկայացուցիչների ստորակարգումը ներսից: Սահիդ՝ ամենաթշվար արաբների միջից, միակն է, որ իսկապես ըմբռստանում է ամենքի և ամեն ինչի դեմ: Նրա պայքարը համամարդակային է, բայց և արտառոց՝ ընկղմվելով չարիքի մեջ, պայքարում է ընդդեմ համատարած չարիքի: Միայնակ հերոս, որի ըմբռստացումը ուղեկցվում է իր իսկ անկմամբ, անկում, ինչը կցնի անգամ իրեն նվաստացնողներին, որը կարողանա փոխել կյանքի իրադարձությունների ընթացքը և կրողնի որուէ նշանակալի հետք. այս է Սահիդ ընտրությունն ու կյանքի կարգախոսը, ինչն էլ փորձում է իրականացնել:

### 3.2. Վարդայի կերպարը՝ կատարելության հասնելու ճանապարհին

Վարդայի՝ «կատարյալ մարմնավաճառուիհու» հասարակաց տունը, թեև չունի «Մեծ պատշգամբի» շքեղությունն ու համբավը, այնուամենայնիվ ապստամբությունից առաջ գրեթե ծիսական մի վայր էր, ուր արար տղամարդիկ գնում էին ամենից առաջ ծիսակարգի մասնակից դառնալու, հիանալու հատկապես Վարդայով, ով քչփորում է ատամները քրոցով։ Վարդան փորձում է լինել կատարյալ մաքոր կերպար, ինչպես Եափսկոպուր՝ «Պատշգամբը» պիեսում, բայց, ի տարբերություն նրա, այս մարմնավաճառուիհն պատկերում է իրեն, խաղում իր դերը «իրականության մեջ», այլ ոչ թե պատրանքների տանը: Հասարակաց տան տիրուսիին երազում է, որ մի օր իր ոսկեզօծ զարդերն ու կիսաշրջազգեստները զգարդարանք լինելու փոխարեն» յուրովի կիսորհրդանշեն իրեն «մարմնավաճառի

<sup>1</sup> Jean Genet, Les Paravents, Paris, Editions Gallimard, 2000, p. 28.

փառքի մեջ»<sup>1</sup>: Եվ որպեսզի անմահանա իր դերի մեջ, Վարդան երեկոն սկսում է շքեղ զգեստներ հագնելու և վառ դիմակներով շաբարվելու դանդաղ ու ցուցադրական հանդիսավոր ծեսը, «ոչնչացնում է» այն ամենը, ինչ մարդկային է իր մեջ վերածվելով «ոսկե մանեկենի»:

Տեսնում ենք, որ հասարակաց տոնը Ժընեի դրամատուրգիայում մի վայր է, ուր իշխում է ծիսական խաղը, ինչը հնարավոր է դարձնում իրականի և անհրականի համադրումն ու պատրանքը որպես իրականություն ներկայացնելու Ժընեի ցանկությունը: Այս ծիսական աշխարհում կերպարները ընդհանրացված միմվոյներ են, որոնց կեցության ճանաչողության՝ չարի և բարու մասին մտորումները փիլիսոփայական ենթատեքստ ունեն և հանգում են հետևյալին՝ չարի և բարու անհավասար պայքարում հաղթում են չարիքն ու դաժանությունը: Տառապանքն ու անխուսափելի չարիքը համատարած են:

Երբ ապատամբությունը կործանում է Վարդայի ստեղծած ծիսական աշխարհը, որը նրա համար ոչ միայն իրական է, այլ գոյաւուման անհրաժեշտ պայման է, նա ընտրում է մահը, որն այս դեպքում փրկարար է:

Ժընեն շոկի է ենթարկում հանդիսատեսին «Պատշգամբը» պիեսում առաջարկելով Եպիկոպոսին, որ լուսանկարվի որոշակի դիրքերով հասարակաց տանը, ինչպես նաև ցուցադրելով Վարդային, ով «կրելով ոսկեզօծ Եպիկոպոսական թիկնոց» բարձրանում է աթոռակի վրա և սկսում է գեղեցիկի և իր յուրօրինակ ոճի մասին քարոզը: Ոչ մի տարբերություն չի դրվում Եկեղեցականի և մարմնավաճառի միջև: Նրանք երկուան էլ կատարում են հասարակությանը անհրաժեշտ և պահանջված գործառույթներ: Ալբեր Դիշին գրում է. «Նրանք հանդիս են գալիս միևնույն բեմում, կրում են նոյն բացակայությունն ու մահը: Ընդամենը «քառերի ու ուսանյության շքահանդես»<sup>2</sup>:

Վարդան «անմահացնում էր» Արևմուտքում ընդունված կերպարների արտաքինը, հագուստներն ու զարդարանքները, բայց նրա պատկերացումները Արևմուտքի մասին նոյնքան սահմանափակ էին, որքան Արևմուտքի բնակիչներին՝ արաբների մասին: Բայց ինչպիսին էլ, որ լինեին Արևմուտքի բնակիչները, արաբները, լեգեոներները, ապատամբները, Վարդան կամ «իր կերպարի պահանջները», նրանք բոլորն էլ խարված են, ինչն էլ դառնում է նրանց կործանման պատճառը: Պիեսի վերջին երկու տարբերակները, ինչպես նաև Ռոժե Բլենի բեմադրությունը ավարտվում են կասկածանքի և անորոշության ժեստերով, մահացածները լրում են բեմը՝ իրենց հետ տանելով շերտավարագույրները: Բեմը դատարկ է: Սա է Ժընեի թատրոնի ուղերձը. կյանքը ունայն է՝ պատրանք:

<sup>1</sup> Jean Genet, *Les Paravents*, Paris, Editions Gallimard, 2000, p. 199.

<sup>2</sup> Albert Dichy, *Chronologie // Magazine littéraire*, 1993, N° 313, p. 17.

### 3.3. Ծիսական թատրոնի դրամատիկ ծածկագրերը

Ժընեի ծիսական թատրոնի մասին գեղագիտական հայացքները հիմնականում արտահայտված են «Նեգրերը» և «Շերտավարագույրները» պիեսներում: Այս պիեսների ծեսերը պատկերում են կերպարներին սոցիալական, հակասական իրավիճակները և ինքնաճանաշման ու բարոյափիլխության խնդիրներ են լուծում: Փորձելով դուրս պրօնել անորոշության և միայնության սարսափելի շրջանից՝ կերպարները ծիսական խաղի միջոցով կերպարանափոխում են, ստեղծում են պատրանքային նոր իրականություն, որն արմատապես տարբերվում է առօրյա իրականությունից: Ներկայացման ծիսական մքնողորդ ստեղծվում է թատերական հազորատների, աքսետարների, արտառոց ժեստերի, վառ գրիմի և դյուժական լեզվի շնորհիվ: Ժընեի ծիսական թատրոնում բառերը ձեռք են բերում թե՛ վերամբարձ տոն, թե՛ հմայելու, կերպարանափոխելու զորություն: Խոսքի, գրեալոճի տարրեր մակարդակները, միայնակ և օտարված կերպարների լիրիկական մենախոսությունները, որոնք հարուստ են փոխարերություններով, այլարանություններով, ոգեկոչումներով, երկարաշուչ աղոթքներով, իսկ նրանց վերամբարձ տոնը և շեշտված հանգերը ծիսական խորհուրդ և հմայք են տախս ներկայացմանը ու ծառայում են երևակայական կերպարների ստեղծմանը:

Սովորական ժեստերը, ինչպես և բառերը, ժընեի թատրոնում կորցնում են գործնական իմաստը, սովորական երևութական աշխարհից տանում են դեպի անտեսանելի ծիսական աշխարհ: Պատկերելով ու միավորելով պատրանքային աշխարհի զգայական գեղեցկությունը կեցության անմիջական տարրերի հետ՝ ժեստերը սիմվոլներ են ստեղծում:

Ժան ժընեի ցանկացած պիեսում առկա են թատերական ժեստի բազմաթիվ դրսւորումներ և դրանք հստակ կատարելու պարտադիր պահանջ դերասաններից, քանի որ, ժընեի կարծիքով, դերասանները բեմի վրա պետք է կատարեն ոչ թե գործողություններ, այլ ժեստեր, չխաղան ներկայացում, այլ իրականացնեն ծես:

«Աղախինները» պիեսը սկսվում է անսովոր ժեստերի դրսւորմամբ, որոնք ներկայացնում են կերպարների փոխարարերությունները, պատկերում են նրանց երկնտրանքը, դժվարին ընտրությունը: Ժընեն ընդգծում է. «Դերասանուիհնների ժեստերը պետք է լինեն համակարգված՝ յուրաքանչյուրը պատկերելով բեկվածի կամ կախվածի պես»<sup>1</sup>:

«Նեգրերը» պիեսի սկզբում տեսնում ենք ժեստերի օրինակ, որոնց իմաստն անհատի հոգեբանության ոչնչացումն է: «Նեգրերը պարում են մենուետ իբր նեգրի սպանած (հանուն ընդհանութի) սայտակամորթ կնոջ դիակառքի շուրջը. նախ՝ ընդգծված հարգայից ժեստերով ողջունում են բեմի վերին հարթակում գտնվող պայտական հանդիսատեսին՝ ծաղրապատկերված թագուհուն, Դատավորին, Միսիոներին, Կառավարչին, որոնց մարմնավորում են կրկին Սևամորթները, բայց

<sup>1</sup> Jean Genet, Les Bonnes, Paris, Editions Gallimard, p. 9.

սպիտակ դիմակներով, հետո խոնարհվում են իրական հանդիսատեսի առջև: Նրանց ժեստերը հեռու են առօրյա կյանքում կիրառվող ժեստերից, որոնք էլ պիեսին անմիջապես հաղորդում են անհերթեր հանդիսավորություն:

Ծեսի մասնակիցներն ազատվում են իրենց անհատականությունից, որպեսզի դառնան ծիսական խմբի ամբողջական և լիարժեք մասնակիցը և իրենց ողջ հոգևոր ուժը կենտրոնացնեն ծեսի արդյունավետության վրա:

Կոստյումը, գրիմը, դիմակը Ժընեի ծիսական դրամատուրգիայի հիմնական տարրերն են, ավելի քան ժեստերն ու լեզուն, քանի որ դերասանի շարժումները թեև շատ լավ տեսանելի են, բայց տևում են մի քանի վայրկյան, իսկ կոստյումը պիեսի ողջ ընթացքում հանդիսատեսի աչքերի առջև է և շատ շոշափելի: Արտառոց կոստյումների, վառ գրիմի և դիմակի կիրառումը նախևառաջ նպատակ ունի ուղղորդել ծեսը երևակայական ոլորտ՝ հեռացնելով առօրյա կյանքի կենցաղականությունից: «Նամակներ Ռոժե Բլենին» գրվածքում Ժընեն ճշգրտում է թատերական կոստյումների իրական դերն ու բնույթը: «Դրանք պետք է ունենան «անհրաժեշտ գեղեցկություն», բայց չպետք է աչքի ընկնեն առանձնապես»<sup>1</sup>: Նոյնը վերաբերում է գրիմին, որը պետք է չափազանցված լինի, ընդ որում՝ պայմանական այս գեղեցկությունը ոչ մի դեպքում չպետք է նման լինի կամ կրկնի մյուս դերասանների դիմագծերը:

Հսու Ժընեի՝ կոստյումը և արսենուարները չպետք է դերասանի համար լոկ պճնվելու միջոց լինեն: Հագուատների ողորմելի ճոխության, գոեհեղության և բազմազանության այս խառնուրդը պետք է «դեկոր ստեղծի և հնարավոր դարձնի կերպարը տեղափոխելու խորհրդանշիշների երևակայական աշխարհը»<sup>2</sup>:

Այսպիսով, դեկորը, քնարական լեզուն և հատկապես թատերական հագուստը Ժընեի էպիտիկ թատրոնի անհրաժեշտ տարրերն են, որոնց միջոցով ներկայացնում վերածվում է ծիսակարգի, իսկ բեմական տարածքը, որտեղ տեղի է ունենում ծես-ներկայացնումը՝ կորցնելով ֆիզիկական չափերը, վերափոխվում է երևակայական վայրի: Ներկայացման ծիսական մեծաշուրջ մթնոլորտը, բեմական տարածքի հարաբերականությունը, կոստյումները, ժեստերը, դյութական լեզուն հեռացնում են մեզ ճնշող, առօրյա իրականությունից, հասցնում մինչև անձայրածիր երկնակամար, ավելին, ներառելով ամբողջ տիեզերքը, հաստատում են, որ Ժընեի թատրոնը երևակայական մի վայր է, որը միաժամանակ հաստատվում և ժխտվում են սուրբն ու սրբապիղծը, կյանքն ու մահը, պատրանքն ու իրականությունը:

<sup>1</sup> Jean Genet, OEuvres complètes, t. 4, «Lettres à Roger Blin», Paris, Gallimard, 1968, p. 401.

<sup>2</sup> Jean Genet, OEuvres complètes, t. 4, «Lettres à Roger Blin», Paris, Gallimard, 1968, p. 402.

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԵՐ

Աշխատանքում փաստարկները քննարկելուց հետո հանգել ենք հետևյալ եզրակացությունների:

- ✓ 20-րդ դարի երկրորդ կեսի ավանգարդի ամենահայտնի ուղղություններից էր «Նոր թատրոն», որն էլ վճռորոշ դարձավ ֆրանսիական թատրոնի նորացման հարցում: Պայմանավորված պատմաքաղաքական իրադարձություններով՝ նոր ժամանակները արժեքների նոր չափանիշներ էին թելադրում: «Նոր թատրոնի» ներկայացուցիչները իրենց պիեսներուած աշխարհը պատկերում էին որպես անիմաստ և անհեթեթ երևոյթների կուտակում, որպես ոչնչով չիմնավորված դաժանության, բռնության և չարիքի հանդես՝ ցոյց տալով մարդկային կյանքի արսուրդը իր ամբողջ կոմիկական և ողբերգական խորությամբ:
- ✓ Ֆրանսիական ավանգարդի առաջատար ներկայացուցիչ, թատրոնի դերասան, բնմադրիչ, դրամատուրգ Ա. Արտոն նոր թատրոնի վերածնունդը կապում է «դաժանության թատրոնի» ստեղծման հետ, որի սկզբունքներն ու դրանց գաղափարական արձագանքները տեսնում ենք ժան Ժընեի՝ թատրոնի մասին գեղագիտական տեքստերում: Այս երկու դրամատուրգները գրում են թատրոնի վերածնման անհրաժեշտության մասին, ինչը պետք է իրականանա ծեսի վերածված թատերական գործողությունների և լեզվի վերափոխման միջոցով:
- ✓ Համեմատելով Ժընեի պիեսները և զուգահեռներ տանելով նոյն ժամանակաշրջանի հեղինակների հետ՝ ընդգծում են Ժընեի դրամաներին բնորոշ տարրերը՝ թանկ և բարդ բնմականացում, զարդարություն թատերական զգեստներ, աքսետարներ և դիմակահանդեսային գրիմ: Դրամատուրգը տարրերվում է նաև իր կերպարների հոգերանական խորը վերլուծությամբ և լեզվական փայլուն ոճով:
- ✓ Ժընեի դրամատուրգիայի առանձնահատկությունները՝ ծիսական խաղ, կերպար և արտացոլանք, իրականի և անիրականի համադրումը, ինչը համապատասխանում է պատրանքը որպես իրականություն ներկայացնելու ժընեի ձգտմանը, անբաժանելի ամբողջություն են կազմուած «Պատշգամբը» պիեսում: Այս պիեսում ներկայացվող միայնակ, անճարակ, հասարակությունից օտարված կերպարները, որոնք իրենց գոյության իմաստի և էության փնտրությների մեջ են, ներկայացնում են հետմոդեռնիստական հասարակության պատկերը:
- ✓ «Պատշգամբը» և «Շերտավարագույրները» պիեսները, որոնք գրվել են միևնույն ժամանակաշրջանում և ըննարկում են գրեթե նոյն գաղափարները: Այս պիեսներում մերժվում է հեղափոխությունների միջոցով դրական բարեփոխումների հանելու գաղափարը: Ըստ Ժընեի հեղափոխությունը պետք է տեղի ունենա մարդկանց գիտակցության մեջ՝ լուսավորվելու և տգիտությունից ծերբազատվելու միջոցով:

- ✓ Ժընեի ծիսական թատրոնի մասին գեղագիտական հայացքները հիմնականում արտահայտված է «Նեգրերը» և «Շերտավարագույշները» պիեսներում: Դրանցում ներկայացված թատերական աշխարհը երկիմաստ է ու գունեղ, ողբերգական և զավեշտալի: Գերիշխում են բազմաթիվ խարդավանքներից ստեղծված սիմվոլիկ կերպարներն ու այլարանուրժունները:
- ✓ Ժան Ժընեի պիեսների ծեսերը, որոնց հիմքում ներառված են անտիկ թատրոնի տարրերը՝ մանրակրկիտ մշակված և ձևափոխված ժամանակակից ոճով, ներկայացումը պատրանքի, ինչպես նաև կերպարները սիմվոլների ձևափոխելու և թատերական էսթետիկ աշխարհ ստեղծելու դրամատիկ միջոցներ են, միաժամանակ ինքնաճանաչման և բարոյափիլսոփայական խնդիրներ են լուծում:

### **Ատենախոսության թեմայով հրատարակված հոդվածներ**

1. Ժան Ժընեի դրամատուրգիան // Համատեքստ-2013, ԵՊՀ հրատարակչություն, Երևան 2013թ. էջ 203-210:
2. Ժան Ժընեի էսթետիկ թատրոնի առանձնահատկությունները, Հանդես (Գիտամեթոդաբանական հոդվածների ժողովածու), Արյան հրատարակչություն, Երևան 2015, N 16, էջ 47-53:
3. 20-րդ դարի ֆրանսիական դրամատորգիայի պատմամշակութային համատեքստը // Գրականության արդի հիմնախնդիրներ, Լուսաբաց հրատարակչություն, Երևան 2015, էջ 119-131:
4. Ժան Ժընեի ծիսական թատրոնի ծածկագրերը (Ժեստեր, սիմվոլային կերպարներ) // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրներ, Լուսաբաց հրատարակչություն, Երևան 2016, էջ 119-127:
5. Ինքնուրժան որոնում՝ կերպարի և արտացոլանքի փառաբանումը Ժան Ժընեի «Պատշգամբը» պիեսում // Գրականության արդի հիմնախնդիրներ, Երևան, Լինգվա, 2016, էջ 72-79

**БАРИКЯН ЛИЛИТ ЖИРАЙОВНА  
ЖАН ЖЕНЕ В КОНТЕКСТЕ ФРАНЦУЗСКОЙ ДРАМАТУРГИИ 2 –ОЙ  
ПОЛОВИНЫ XX ВЕКА.**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата филологических наук по специальности 10.01.07 – 'Зарубежная литература'.

Защита диссертации состоится 03.02.2017 года в 12:30 на заседании специализированного совета Литературоведения 003 Института литературы имени М. Абегяна НАН РА по адресу: ул. Григора Лусаворича 15, г. Ереван, 0002, Республика Армения

**РЕЗЮМЕ**

Настоящая работа посвящена исследованию особенностей драматургии французского писателя, поэта, эссеиста, общественного деятеля XX века Жана Жене.

В работе мы рассмотрели и обратились к научным трудам, исследуемым произведения Жана Жене, к критическим статьям, резюмировали и обстоятельно представили социальный, политический, философский, психологический подтексты, исследуемые в пьесах Жана Жене, а также показали их жанровые и структурные особенности: театр в театре, образ и отражение, трансформация реальности в иллюзию.

В работе нами был применен сопоставительный метод литературоведческого анализа, с помощью которого был представлен контекст театральных направлений XX века посредством сравнения существующих тематических основ и драматических стилей.

Методом типологического анализа, сопровождающегося комментированием, нами проводится сравнение основных особенностей системы образов и художественных взглядов Жана Жене и современных ему драматургов, выявляются различия манеры их письма, что позволило нам дать наиболее справедливую оценку их произведений.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы. Объем работы составляет 153 страницы.

В ведении представлено краткое описание предметных, стилевых и сценических особенностей драматургии Жана Жене, намечены задачи и цели исследования, обоснованы актуальность и новизна работы. Нами указаны и перечислены труды, определенным образом касающиеся темы диссертации. Представлена структура работы, вкратце изложено содержание каждой из глав.

Первая глава диссертации ("Формирование театральных направлений и новых традиций во французской драматургии XX века") рассматривается в контексте формирования театральных направлений и новых традиций во французской драматургии XX века".

Во второй главе ("Особенности драматургии Жана Жене") исследуются особенности драматургии Жана Жене и способы формирования творческого метода драматурга. В главе нами проведен всесторонний, литературоведческий анализ текста пьес и образов.

В третьей главе ("Символика ритуального театра Жана Жене") исследуются ритуалы пьес Жана Жене, на основе которых легли элементы античного театра (жест, маска, грим). Таким образом, ритуалы являются средством трансформации представления в иллюзию и создания театрального эстетического мира.

В результате исследования доводов в работе, мы пришли к следующему умозаключению:

✓ Одним из наиболее известных направлений авангарда второй половины XX века несомненно был “Новый театр”, имеющий существенное значение в обновлении французского театра. Обусловленное историко-политическими событиями новое время диктовало новые критерии системы ценностей. Представители “Нового театра” изображали мир в своих пьесах как скопление бессмысленных и нелепых явлений, как торжество ничем необоснованной жестокости, насилия и зла, тем самым показывая абсурдность человеческой жизни со всем ее трагизмом и комизмом одновременно.

✓ Ведущий представитель французского авангарда, актер театра и драматург А. Артон возрождение нового театра связывает с созданием “театра жестокости”, принципы и идеологические отклики которого мы находим в художественных текстах о театре Жана Жене. Оба драматурга пишут о необходимости возрождения театра, осуществление которого возможно посредством преобразования театральных действий и языка.

✓ Сопоставление и проведение параллелей пьес Жене с другими авторами того же периода позволяют выделить свойственные драмам Жене отличительные черты: дорогостоящая и сложная инсценировка, яркие, красочные театральные костюмы, аксессуары и маскарадный грим. Драматург отличается умением подвергать глубокому психологическому анализу своих персонажей, а также блестящим стилем языка.

✓ В Пьесах “Балкон” и “Ширмы”, написанных в один и тот же период, нашли отражение вышеупомянутые идеи. В них опровергается идея достижения реформ революциями. Согласно Жене, революция должна произойти в сознании людей через просвещение и избавления от невежественности.

✓ Особенности драматургии Жене, а именно, ритуальная игра, образ и отображение, синтез реальности и вымысла, согласовывающиеся со стремлением Жене представить иллюзию в качестве реальности, составляют неделимое целое в пьесе “Балкон”. Представленные в этой пьесе одинокие, беспомощные, отрещенные от общества персонажи, находящиеся в поисках сути и смысла своего существования, являются отображением постмодернистского общества.

✓ Ритуалы пьес Жана Жене, в основу которых легли элементы античного театра, скрупулезно обработанные и преобразованные в новом стиле, являются драматическими средствами трансформирования представления в иллюзию, образов в символы, а также создания эстетического театрального мира. В то же время в ритуалы отражают социальную, психологическую, нравственную стороны персонажей, разрешают нравственно-философские вопросы и проблемы самопознания.

✓ Соответствие художественных взглядов о ритуальном театре нашли отражение в основном в пьесах “Негры” и “Ширмы”. Персонажи пьес, не сумевшие смириться с бесперспективной реальностью, с помощью ритуальных

игр создают иллюзорный мир, но этот мир, как выясняется, более жесток и реален, чем сам реальный мир.

## BARIKYAN LILIT

### JEAN GENET IN THE CONTEXT OF THE 2ND HALF OF THE 20TH CENTURY FRENCH DRAMATURGY

Dissertation for obtaining the scientific degree of candidate of Philological Sciences, in the specialty of "Foreign Literature" (Specialty Code 10.01.07).

The defense of the dissertation is scheduled for 3 February 2017, at 12:30 pm, at the meeting of the Specialized Council of Literary criticism N 003 at the Institute of Literature after M. Abegyan, NAS RA. address: 15 Grigor Lusavorich str. 0002, Yerevan, Republic of Armenia.

## SUMMARY

The present work is dedicated to the study of the peculiarities of the 20th century French novelist, poet, essayist, playwright and political activist Jean Genet's dramaturgy.

The research studies scientific papers and literary critical articles related to Genet's works; summarizes and presents in detail social, political, philosophic and psychological implications discussed in Jean Genet's plays; as well as presents genre and structural features of the drama - the theater within theater, image and reflection, transformation of the reality into illusion.

The study has been carried out by the application of the method of comparative literary analysis, which presents the context of the 20th century theatrical aspects by means of comparing the existing thematic bases and dramatic styles. With the application of the method of typological analysis, along with explanatory interpretations, the main features of aesthetic views and character creation systems, as well as style differences of Jean Genet and other playwrights of the same period have been compared, which allows us to appraise their works more accurately.

The paper consists of Introduction, three Chapters, Conclusion and Bibliography. The work consists of 153 pages.

In the introduction the brief description of the content, stylistic and staging characteristics of Jean Genet's dramaturgy is presented, the topicality of the work is well grounded, the goals and objectives set out in the work are listed, as well as the scientific novelty of the research is outlined. Scientific works related to the subject matter of the paper are mentioned in the introduction. The structure of the paper, along with the summary of each chapter, are also presented.

Chapter One ("The Formation of Theatrical Directions and New Traditions in the 20th Century French Dramaturgy) defines the context of formation of theatrical directions and new traditions in the 20th century French dramaturgy.

Chapter Two ("The Characteristics of Jean Genet's Dramaturgy") examines the characteristics of Genet's dramaturgy and the ways of formation of his creativity. A comprehensive, literary analysis of the texts of plays and the characters has been carried out.

Chapter Three ("The Symbolism of Jean Genet's Ritual Theater") examines the rituals of Jean Genet's plays including elements of the ancient theater (gesture, mask, makeup) which are means of transforming the performance into illusion and creating an aesthetic theatrical world.

Having considering the arguments presented in the work we came to the following conclusions:

- ✓ The "New Theater" was undoubtedly one of the most popular directions of the second half of the 20th century avant-garde, which played a crucial role in the renewal of French theater. Due to historical and political events the new era dictated new standards of values. The representatives of the "New Theater" depicted the world in their plays as a pile of absurd and meaningless phenomena, as a pageant of ungrounded cruelty, violence and evil, showing the absurdity of human life in all its comic and tragic depth.
- ✓ The leading representative of the French avant-garde, theater actor, director, playwright [Antonin Artaud](#) connects the rebirth of the new theater with the creation of the "theater of cruelty", the principles and ideological reverberations of which we find in Jean Genet's texts of aesthetic creativity about the theater. The two playwrights wrote about the need for the revival of the theater, which should be actualized by means of transforming theatrical actions and language into rituals.
- ✓ The common elements of Genet's dramas are revealed by comparing and drawing parallels between Gene's plays and the authors of same period - expensive and complicated staging, theatrical dresses in bright colors, accessories and pageantry makeup. The playwright also stands out with the deep psychological analysis of his characters and a brilliant language style.
- ✓ The plays "The Balcony" and "The Screens" were written almost at the same time and discuss the same ideas. These plays reject the idea of making reforms through revolutions. According to Genet the revolution must take place in people's consciousness through enlightenment and getting rid of ignorance.
- ✓ The characteristic features of Genet's dramaturgy - ritual game, image and reflection, the combination of the real and the unreal, which corresponds to Genet's pursuit of presenting illusion as reality, make an indivisible whole in the play "The Balcony". The lonely, awkward, alienated from the society characters of this play, who are in search of the meaning and essence of their existence, portray the postmodernist society.
- ✓ The rituals of Jean Gene's plays, which include elements of ancient theater thoroughly designed and modified in a modern style, are dramatic means of transforming the performance into illusion, as well as the characters into symbols and creating an aesthetic theatrical world; at the same time they present the social, psychological and moral aspects of the characters, solve self-awareness and moral-philosophical problems.
- ✓ The compliance of Gene's ritual theater with the aesthetic views is mainly expressed in the plays "The Blacks" and "The Screens". Unable to come to terms with the unpromising reality, the characters of these plays create their own imaginary world through the ritual game, but it appears to be more cruel and real than the real world itself.

